ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ՀԱՄԱԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԹՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ 1905-1906 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 93/94 DOI: 10.52063/25792652-2025.1.24-160

ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
karine.yeghiazaryan@yandex.ru
ORCID: 0009-0007-1669-478X

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել 1905-1906 թվականներին Այսրկովկասը ցնցած հայ-թաթարական կռիվների՝ որպես իրական պատճառներից մեկի՝ համաիսլամականության և համաթուրքականության դերը: 1903 թվականի հունիսի 12-ի՝ հայոց եկեղեցու ունեցվածքի բռնազավթման համար ցարիզմի դեմ մղվող պայքարից դեռևս դուրս չեկած՝ 1905-1906 թթ. Այսրկովկասում տեղի ունեցան բուռն իրադարձություններ՝ հայ-թաթարական կռիվներ, որոնք տևեցին մեկուկես տարի և ունեցան աղետալի հետևանքներ Այսրկովկասի կյանքի համար՝ երկու կողմերին պատճառելով մարդկային կորուստներ, ավերածություններ, անասելի նյութական վնասներ, որոնք վերականգնելու և բնականոն կյանքին վերադառնալու համար անհրաժեշտ եղավ մի քանի տարի: Ավելի քան մեկ դար առաջ տեղի ունեցած այդ իրադարձությունների հետազոտությունն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Արցախյան առկախ խնդիրը, հայ-ադրբեջանական՝ մեղմ ասած՝ ոչ բարյացակամ հարաբերությունները միանշանակ ուշադրության կենտրոնում են պահում նաև ոչ հեռավոր անցյալի պատմական իրողությունները: Դրանց հստակ իմացությունը թույլ է տալիս ըստ էության բացատրելու հայ-ադրբեջանական ներկա հարաբերությունների իրական արմատները և որոշակիորեն կանխատեսելու ոչ հեռավոր ապագայի հնարավոր զարգացումները: Մերօրյա իրականությունում հայ ժողովրդի համար շատ բան չի փոխվել. հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունը դարձյալ անհավասար պայքարի մեջ է՝ իր դարավոր հարևան-թշնամու՝ Թուրքիայի, ինչպես նաև նրա արբանյակը հանդիսացող Ադրբեջանի հետ իր պատմական հայրենիքում՝ Արցախյան կնճռոտ խնդիրը ի շահ իր իսկական տերերի լուծելու ու պատմական Արցախում ապրելու իրավունքը իրականացնելու համար: Կարևոր է ոչ շատ հեռավոր անցյալի պատմաքաղաքական իրադարձությունների խորքային ընկալումը, սթափ մոտեցմամբ և ապակուսակցական պատմագիտական հայեցակարգի մշակմամբ հայ-թուրքական (թաթարական) վաղեմի ոչ բարյացակամ հարաբերություններն առավել խաղաղ ու Հայաստանի համար անվտանգ պահելու տեսանկյունից:

* Հոդվածը ներկայացվել է 05.04.2025թ., գրախոսվել՝ 19.04.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Սույն հոդվածի շրջանակներում մեր առջև խնդիր ենք դրել՝

ա) իրադարձությունները ներկայացնելու համակողմանի, հնարավորինս անաչառ, այս կամ այն նշանակալի իրադարձությունը ներկայացնել՝ հիմնվելով հուշագրությունների, նամակների, պահպանված փաստաթղթերի վրա:

բ) ներկայացնել համաիսլամականության ու համաթուրքականության դերը 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվներում որպես լուրջ գործոններ:

Հիմնախնդրի լուսաբանման հիմքում դրված են պատմականության, փաստերի համադրության և իրադարձությունների համակողմանի վերլուծության պատմահամեմատական և պատմաքննական մեթոդները:

Հետազոտության շրջանակներում կատարված անկյունաքարային եզրահանգումն այն է, որ համաիսլամիզմի և համաթուրքականացման գաղափարախոսությամբ առաջնորդվող կովկասյան թուրք հրոսակախմբերի միջոցով ցարական իշխանությունների թողտվությամբ սանձազերծված ջարդերի քաղաքականությունը հայության նկատմամբ ֆիզիկական ոչնչացման փորձ էր, որը հիմնովին տապալվեց՝ շնորհիվ ազատագրական պայքարի նշանավոր գործիչների կազմակերպած հերոսական ինքնապաշտպանության:

Հիմնաբառեր՝ *հայ-թաթարական կռիվներ, ընդհարումներ, համաիսլամականացում, համաթուրքականություն, գաղափարախոսություն, էթնիկ գիտակցություն, ինքնապաշտպանություն:*

Ներածություն

Սկսած 1905 թ. սկզբներից՝ թե՛ հայկական, թե՛ թաթարական, թե՛ ռուսական պաշտոնական ու հեղափոխական շրջանակներում փորձել են բացատրել ավելի քան մեկ և կես տարի Կովկասը ցնցած իրադարձությունների պատճառները: Կողք կողքի ապրող հայ և թաթար բնակչության փոխհարաբերություններում անցյալում կուտակված բազմազան խնդիրները, ցարական իշխանությունների հրահրիչ քաղաքականության շնորհիվ դրսևորվեցին իրենց բոլոր երանգներով՝ օրակարգի գլխավոր հարց դարձնելով կովկասահայության գոյապայքարի և արդյունավետ ինքնապաշտպանության կազմակերպման հարցերը:

Կովկասի նորանշանակ փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ Բաքվի 1905 թ. փետրվարյան դեպքերի վերաբերյալ ուղարկված պաշտոնական նամակներից մեկում ասվում էր, որ հայ-թաթարական ընդհարումներն, իբրև, սկսվել են տեղական իշխանությունների համար միանգամայն անսպասելի: Նշվում էր, որ կռիվները տեղի էին ունենում հայերի և թաթարների զինված խմբերի միջև, դրանց հաջողվել է վերջ տալ, բայց հնարավոր չի լինելու երկար պահել խաղաղ իրավիճակը (Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1022, g. 3, գ. 111, թ. 1):

Անշուշտ, հայ-թաթարական կռիվների հիմքում ընկած են եղել նաև այլ՝ ավելի խորքային պատճառներ: Ազգամիջյան կռիվների բռնկման պատճառ հանդիսացան պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական և մի շարք այլ գործոններ:

Միքայել Վարանդյանի պատկերավոր բնութագրմամբ. «Տնտեսական, քաղաքական, մշակութային, կրօնական պատճառներու հիւսվածք մըն է այն՝ որու մէջ մէկ երկուքը առաջնակարգ ու վճռական դեր խաղացին անակնկալ հրդեհի բռնկման մէջ» (Վարանդեան 296): Սոցիալ-տնտեսականից բացի սոցիալ-մշակութային պատճառը նույնպես ընկած է կռիվների հիմքում: Նորաստեղծ հայ բուրժուազիան, թեև առանձնապես կրթված չէր, բայց գիտակցում էր գիտելիքի արժեքը: Պատահական չէ, որ նրա ներկայացուցիչները XIX դ. երկրորդ կեսին ձեռնամուխ եղան ակտիվ բարեգործական գործունեության: Նախ՝ «Բաքվի մարդասիրական ընկերությունը», մի փոքր ուշ՝ նաև «Կովկասի հայ բարեգործական ընկերությունը»,

շնորհիվ հայ մեծահարուստների, ծավալեցին բարեգործական ակտիվ քայլեր: Հայ բանվորների համար բացվում էին հիվանդանոցներ, դպրոցներ, գրադարաններ, կառուցվում անհամեմատ բարեկեցիկ հանրակացարաններ: Բացի այդ, շնորհալի հայ երիտասարդները բարեգործական հաստատությունների միջոցներով գործուղվում էին Եվրոպա և Ռուսաստան՝ բարձրագույն կրթություն ստանալու: Բնական է, որ հայ բանվորների՝ անհամեմատ բարվոք վիճակն առաջ էր բերում մահմեդական, հատկապես թաթար, բանվորների նախանձը և որպես դրա հետևանք՝ թշնամանքը հայերի հանդեպ:

Բաքվում փետրվարի 6-9-ը տեղի ունեցած սարսափելի դեպքերը ցնցեցին Թիֆլիսի և գավառների հայ բնակչությանը: Բոլորն անակնկալի էին եկել, թե ինչպես կողք կողքի ապրող երկու ժողովուրդներ կարող էին զենք բարձրացնել և կոտորել միմյանց («Մշակ» 1905):

Թիֆլիսի քաղաքագլուխ Ք. Վերմիշևը, Բաքվում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ, Կովկասի փոխկառավարչի պաշտոնակատարին 1905 թ. փետրվարի 9-ին հղած իր գրության մեջ վախ և մտահոգություն էր հայտնում ջարդերի ու կռիվների ալիքի հնարավոր տարածման վերաբերյալ («Մշակ» 1905): Նման մտահոգությունն անտեղի չէր, քանի որ Բաքվում սկսված կռիվները կարճ ժամանակ անց լայն տարածում գտան Թիֆլիսի, Ելիզավետպոլի (Գանձակ) և Երևանի նահանգների՝ հայ-թաթարական խառը բնակչություն ունեցող տարածքներում:

Բաքվի դեպքերից հետո հայ ազատագրական պայքարն առաջնորդող կուսակցությունների համար պարզ դարձավ, որ կովկասահայությունը կանգնած է ջարդերի և ոչնչացման վտանգի առաջ: Կովկասում հայությունը, նախորդ երկու տարիների իրադարձությունների բերումով, համարվում էր ամենահեղափոխական տարրը, ուստի իշխանությունները, սկսված հեղափոխության պայմաններում, հայությանը չեզոքացնելն առաջնային խնդիր էին համարում: Դրա լուծման ուղիներից մեկը հայ-թաթարական բախումների ալիքը ողջ երկրամասում տարածելն էր:

ՀՅԴ-ն թռուցիկներով, տպագրված բրոշյուրներով խաղաղասիրական կոչեր էր անում, թաթարներին հորդորում ուշքի գալ, հետ կանգնել անիմաստ կռիվներից, բայց՝ ապարդյուն: Կրոնական մոլեռանդությունը և ցարական իշխանությունների խրախուսական քաղաքականությունը կուրացրել էին թաթար ղեկավարներին (Ֆարհատ 74-75): Գնալով հայերի ու թուրքերի մոտ փոխադարձ ատելությունն ավելի էր ուժեղանում: Այդ ամենը տանում էր նոր՝ ավելի լայնամասշտաբ ու արյունահեղ կռիվների, որոնք ունեին ազգային-էթնիկական, պատմական, սոցիալ-տնտեսական խորքային պատճառներ: Պատմագիտության մեջ հայ-թաթարական ընդհարումների պատճառներից, թերևս, ամենաքննարկվածը եղել է և մնում է ռուսական կայսրության հրահրիչ գործունեությունը՝ առաջին հերթին ընդգծելով ցարիզմի սադրիչ քաղաքականությունը՝ երկրամասը հեղափոխական ցնցումներից հեռու պահելու համար: Այնուամենայնիվ, հայ-թաթարական ընդհարումները ռուսական կառավարության համար եղան նաև մի միջոց, որով նրանց հաջողվեց իրարից բաժանել կովկասյան ազգերին:

Համաիսլամականությունը և համաթուրքականությունը՝ որպես հայ-թաթարական կռիվների գործոններ

Հայ-թաթարական կռիվների պատճառների շարքում չպետք է անտեսել համաիսլամականության և համաթուրքականության՝ որպես գործոնների դերը: XIX դ. վերջին տասնամյակներին Օսմանյան կայսրությունում տիրապետող էր համաիսլամականության գաղափարախոսությունը, որի առանցքում դրված էր աշխարհի մահմեդականներին Օսմանյան Թուրքիայի շուրջ համախմբելու գաղափարը («Մուրճ» 200-201): Կովկասյան տարածաշրջանը ողողված էր թուրքական գործակալներով, որոնք մահմեդական բնակչության միջավայրում քարոզում էին

համաիսլամականության գաղափարներ: Մասնավորապես՝ նրանք Կովկասի մահմեդականներին հրահրում էին հայերի դեմ, որոնք այդ տարիներին համարձակվել էին մարտահրավեր նետել աշխարհի մահմեդականների խալիֆ Օսմանյան սուլթանի դեմ:

Հայ ազգային շարժումը կասեցնելու նպատակով 1905 թ. փետրվարին վարչակազմը հրահրում է հայ-թաթարական ընդհարումները, որոնց ընթացքում բացահայտվեց թաթարական ազգայնական շարժման համաթուրքականության աստառը: Համաթուրքականության ծրագրի իրականացումը խոչընդոտում էին ինչպես արևմտահայերը, այնպես էլ արևելահայերը, քանի որ ենթադրյալ «Մեծ Թուրանի» սահմանների մեջ ներառվելու էր ամբողջ Կովկասը (Վարդանյան, Թաթարական ազգայնամոլության դրսևորումներն Անդրկովկասում 90):

Այսրկովկասի թաթարների և Թուրքիայի միջև XX դարի սկզբին ձևավորվում էր գաղափարա-հոգեբանական և քաղաքական միասնություն: Թաթարական ազգայնականների մեծ մասը մոլեռանդորեն հավատում էր համաիսլամականության հաղթանակին և իրագործում եռանդուն քարոզչություն հասարակ ժողովրդի շրջանում: Ամենուր քարոզում էին բոլոր իսլամադավաններին համախմբվել իսլամի դրոշի ներքո:

Թաթարների էթնիկ հավաքական գիտակցության ձևավորումը:

1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվները մեծ ազդեցություն ունեցան ոչ միայն երկու ժողովուրդների փոխհարաբերությունների վրա, այլև ամբողջ Անդրկովկասի քաղաքական կյանքի վրա, քանի որ դրանց հետևանքով վերջնականապես ձևավորվեցին Այսրկովկասի երեք ժողովուրդների՝ հայերի, վրացիների թուրքերի փոխհարաբերությունները, նրանց քաղաքական ձգտումները: Թաթար բնակչության համար՝ հայ-թաթարական ընդհարումների ունեցած ամենաուշագրավ հետևանքը նրա էթնիկ ինքնության և հավաքական ինքնագիտակցության սաղմնավորման գործընթացն է: Մինչև 20-րդ դարի սկիզբը թաթարների շրջանում դեռևս ձևավորված չէր ազգային հավաքական ինքնագիտակցություն, իսկ արդեն 20-րդ դարի սկզբին Այսրկովկասի թաթարների շրջանում սկսում է ձևավորվել էթնիկ ինքնահաստատման և հավաքական ինքնության գործընթացը. Էթնիկ հավաքական գիտակցության բարձրացման տեսակետն էին առաջ քաշում թաթար մտավորականները: Նրանք համոզված էին, որ կռիվների շնորհիվ է, որ թաթարները սկսել էին հասկանալ մի ցեղի պատկանելու փաստը (Վարդանյան, Ազգամիջյան հակամարտությունը որպես էթնիկ ինքնության ձևավորման գործոն 72-78):

Նման գաղափարների հետևում, բնականաբար, կանգնած էր համաթուրքական գաղափարախոսության քարոզչություն, որը ծնունդ էր առել Ռուսական կայսրության տարածքում (Landau 7):

Մինչև կռիվների սանձազերծումը Կ. Պոլսից Կովկաս անցած հատուկ գործակալների ջանքերով Բաքվում ստեղծվեց համաթուրքական գաղափարներ քարոզող կազմակերպություն, որի նպատակն էր շիա և սուննի ճյուղերի մահմեդականների միավորումը: Այս կազմակերպության և Կովկասում գործող գործակալների առջև դրված էր մի խնդիր՝ արթնացնել մահմեդականների գիտակցությունը և հայերից Անդրկովկասը մաքրելու համար թաթարներին հրահրել նրանց դեմ, ազգամիջյան հակասությունները դարձնել Ռուսական կայսրության թուլացման կարևոր լծակ: Համաթուրքականության գաղափարախոսները, հաստատվելով Բաքվում, սկսեցին գործունեություն ծավալել Կովկասի մահմեդական բնակչություն ունեցող համարյա բոլոր վայրերում: Քարոզչությունը նպաստավոր դարձնելու նպատակով Բաքվում սկսեց լույս տեսնել «Կասպի» լրագիրը (Յովհաննիսեան 1905):

1905-1906 թթ. փոխարքա Ի.Վորոնցով-Դաշկովի հրավիրած հաշտեցման համագումարների ժամանակ համիսլամական գործիչները չէին էլ թաքցնում, որ հայ-թաթարական կռիվները պայմանավորված են նաև Օսմանյան պետության դեմ հայերի

ազատագրական պայքարը զսպելու նպատակադրումով: Տեղի ունեցածի մեղավոր նրանք համարում էին ՀՅԴ-ին և պահանջում վերացնել Օսմանյան կայսրությունում սուլթանի դեմ պայքարող այդ կուսակցությունը:

Թաթարները, տարված համաթուրանական գաղափարներով, հավակնություն ունեին Այսրկովկասը իրենց ձեռքը վերցնելու՝ երբևիցե իրենց ունեցած իշխանությանը վերատիրանալու համար: Այս հավակնությունը պիտի իրականանար հայերի հաշվին, որոնք զարթոնք էին ապրում դեռևս 19-րդ դարի 60-ական թվականներից հետո: Անդրկովկասի թաթար ղեկավարող շրջանակները, որոնք խոր ազդեցություն էին կրում պանթուրանիզմից և պանիսլամիզմից, հայ տարրի մեջ տեսնում էին ոչ միայն իրենց նպատակների իրագործման խոչընդոտ, այլ նաև հակառակորդ, որը կռիվ էր մղում ցեղակից կայսրության դեմ: Հայ ժողովուրդը 1905 թ. սկզբներին ստիպված եղավ ներգրավվել Կովկասի թաթարների դեմ լուրջ հակամարտության մեջ: Այսրկովկասի հայության առջև ծառանում է հայերի նոր ջարդերի անմիջական սպառնալիք, ինչն անակնկալ էր ոչ միայն ժողովրդի, այլև ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող ազգային հեղափոխական կուսակցությունների համար (Գևորգյան 54):

Անդրադառնալով հայ-թաթարական կռիվների պատճառներին՝ Մ. Վարանդյանը գրում է. «ոչ մի տարակոյս, որ այդտեղ համիտեան համիսլամականներու թաթը կար... Բագուի մէջ մշակւած ծրագիրն էր, որ կը ձգտէին ի կատար ածել խաները,- ազատւել հայ տարրէն, կոտորել, կամ ստիպել գաղթելու դէպի այլ վայրեր, և ի հարկին անկախ յայտարարել Նախիջևանը իր գաւառով» (Վարանդեան 314):

Վերոնշյալ բոլոր հանգամանքները, կազմելով մեկ ամբողջություն, XX դ. սկզբին խիստ սրել էին շերտընդմեջ ապրող ժողովուրդների՝ հայերի և կովկասյան թաթարների հարաբերությունները: Ստեղծված պայմաններում ցանկացած առիթ կարող էր սկիզբ դնել նրանց միջև անզիջում զինված պայքարի:

Հայ-թաթարական կռիվների պատճառներին անդրադառնալիս պետք է առանձնացնել նաև հայ-թաթարական կռիվների ընթացքում հայկական ինքնապաշտպանությունը կազմակերպող և ղեկավարող ՀՅԴ-ի որդեգրած նոր ռազմավարության՝ Կովկասյան գործունեության նախագծի ընդունման ազդեցությունը դեպքերի ընթացքի վրա: Կովկասյան գործունեության նախագծի որոշումն ընդունվել էր ՀՅԴ խորհրդի կողմից, իսկ մինչ այդ՝ 1904 թվականի նոյեմբերին, ՀՅԴ-ը մասնակցել էր Ռուսաստանի հեղափոխական ու ընդդիմադիր կուսակցությունների առաջին խորհրդաժողովին, որը ինքնակալության տապալման համար վճռական քայլեր ձեռնարկելու և Ռուսաստանում սահմանադրական կարգեր հաստատելու վերաբերյալ որոշումներ էր ընդունել (Լազեան 7): Փարիզյան խորհրդաժողովի՝ ցարիզմի դեմ ընդունած որոշումները, առավել ևս՝ ՀՅԴ մասնակցությունը դրան, չէր կարող ցարական կառավարության տեսադաշտից վրիպել և, հետևաբար, ցարական կառավարությունը չէր կարող բարյացակամ տրամադրված լինել ՀՅԴ-ի գործունեության նկատմամբ՝ չնայած նրան, որ տարիներ անց Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը ցարին ուղղված իր զեկուցագրում, նշելով ՀՅԴ ձևավորման նախադրյալներն ու պայքարի նպատակը, ստիպված էր խոստովանել, որ ՀՅԴ-ն ժամանակին ստեղծվել է թուրքահպատակ հայերին թուրքական տիրապետությունից ազատագրելու համար, և Ռուսական կայսրությունում նրա գործունեությունը արտահայտվել է միայն դրամ հայթայթելով (Всеподданейший отчет за восемь лет управления Кавказом Генерал-Адютанта Графа Воронцова-Дашкова, 7).

Հարկ է նաև նշել, որ մինչև ցարական կառավարության կողմից Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքի ընդունումը (1903 թ.), հայ ժողովուրդը մյուս ազգերի նման հավատարիմ ծառայում էր ցարիզմին (Всеподданейший отчет за восемь лет управления Кавказом Генерал-Адютанта Графа Воронцова-Дашкова, 7).

Ռուսական կառավարության վարած քաղաքականությունը, սակայն, չէր կարող ՀՅԴ-ին չստիպել փոխել իր գործունեության մարտավարությունը՝ զբաղվելով նաև կովկասահայերի խնդրների լուծմամբ:

Հայ-թաթարական կռիվների պատճառների վերլուծությանն անդրադարձավ ՀՅԴ-ը՝ 1905 թվականի նոյեմբերի 13-ին Թիֆլիսում սկսված իր Ռայոնական ժողովի շրջանակներում: Ժողովում հարցը քննարկելիս ներկայացվել են մի քանի կարծիքներ, սակայն որպես ընդհանրական տեսակետ արձանագրվել է հետևյալ ձևակերպումը.

«1. Կառաւարութեան պրովօկացիան յանուն ընդհանուր պետական շահերի. Հայերին որպէս յեղափոխական ժողովուրդ ընդունելով՝ նրանց թափը կոտրելու համար ռուս կառավարութիւնը աշխատում է առաջ հանել թուրք խուժանին»: Այսպիսի կրիտիկական մոմենտում, Ռուսաստանի ընդհանուր յեղափոխութեան, մանաւանդ կովկասեան յեղափոխութեան ոյժը թուլացնելու համար թուրք-հայկական խռովութիւնները մի լավ միջոց են: 2. Համաիսլամիզմը, որ ծնունդ է առել Ելդզից եւ Կովկասում ղեկաւարւում է մի քանի ազդեցիկ մարդկանցով: 3. Թուրք խուժանի թալանի ախորժակը: 4. ...թուրքերի քաղաքաքութիւնը, որտեղ ուժեղ են՝ յարձակվել, իսկ որտեղ իրենք թոյլ են՝ համերաշխութեան մասին խօսել» (Նիւթեր 238):

Հայ-թաթարական կռիվների հետևանքները

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների արդյունքում, չնայած ունեցած մարդկային կորուստներին և տնտեսական ավերածություններին, այնուամենայնիվ, դրանց շնորհիվ թաթար բնակչություն մեջ սկսեց ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացը: Նրանք սկսեցին հասկանալ, որ իրենք մի ցեղ են և էթնիկ կապով կապված են միմյանց հետ: Նրանց մոտ ձևավորվեց էթնիկության գաղափարը: Այս ամենը հիմք դարձավ, որ նրանք ձգտեին տարածաշրջանում տարածքային ու քաղաքական առումով ինքնահաստատման:

1905 թ. փետրվարից սկսված հայ-թաթարական կռիվները տարի ու կես արյունով և ավերակներով լցրին Արևելյան Անդրկովկասի այն բոլոր վայրերը, որտեղ հայերը և թուրքերը ապրում էին շերտընդմեջ: Թուրքերը հարձակվում էին, սպանում, հայերը պաշտպանվում էին, իսկ որոշ դեպքերում իրենք էին հարձակվում: Նման պայմաններում ցարական իշխանությունները՝ Մ. Նակաշիձեի գլխավորությամբ, հայտարարեցին, որ իրենք անկարող են դադարեցնել կռիվը, թող կռվողները իրենք հաշտվեն իրար հետ ու դադարեցնեն կռիվը: Բոլորն էլ տեսնում էին, որ իշխանություններն ունեն բավականաչափ զորք, որպեսզի դադարեցնեն կռիվը, բայց վերջիններիս հրամայված էր անտարբեր դիտորդի դերում մնալ և չմիջամտել այդ կռվին: Միշտ նույն պատասխանն էին ստանում, որ իրենք թույլ են և ոչինչ չեն կարող անել: Կռիվներն ընթանում էին ռուս զինվորների աչքի առաջ, որոնք ոչինչ չէին ձեռնարկում դրանք հանդարտեցնելու համար: Ռուս զինվորների այս վարքը ապացույցն էր, որ կռիվները հրահրվել է իշխանությունների կողմից:

Հայ-թաթարական ընդհարումները ռուսական կառավարության համար եղան նաև մի միջոց, որով նրանց հաջողվեց իրարից բաժանել կովկասյան ազգերին: Այդ գործը կատարեց Թիֆլիս ժամանած փոխարքա կոմս Ի. Վորոնցով Դաշկովը:

ՀՅԴ Արևելյան բյուրոյին՝ 1905 թ. հունիսի 30-ին Նիկոլ Դումանի գրած նամակում անդրադարձ կա նաև 1905 թ. կեսերի դրությամբ Երևանի նահանգի ունեցած կորուստներին. «Մրգաստանի ընդհանուր պատկերը. մարդկային զոհերի թիւը, երեւի չի անցնի 300-ից, իսկ թուրքերինը անհամեմատ շատ, սպանուած թէ՛ հայերի եւ թէ՛ զօրքերի ձեռքով: Նախիջեւանի 47 գիւղից 20-ը հիմնայատակ, 10-ը՝ կիսավեր: Մնացած շրջաններում հատ ու կտոր թեթեւ նիւթական վնասներ եւ մի քանի անհատական սպանութիւններ: Թուրքերի կողմից մատնուած է հրի ու սրի 18 գիւղ, որոնցից 2-3ը գոհացուցիչ, բացի դրանից անհատական սպանություններ երկու կողմից...» (Նիւթեր 389): Հայ-թաթարական ընդհարումները, չնայած պարտադրված

էին հայությանը, իրենց բոլոր բացասական դրսևորումներով դրական բեկում առաջացրին հայ ժողովրդի հոգեբանության մեջ: Դրանում իր վճռորոշ դերն ունեցավ ՀՅԴ-ն, որը կարողացավ կարճ ժամանակամիջոցում հավաքագրել, զինել և կազմակերպել հայությանը և թշնամու հետ խոսել իր իսկ պարտադրած լեզվով (Թարխանյան 111): Անդրադառնալով ՀՅԴ ունեցած դերակատարությանը՝ Արամայիսը գրում է. «...երբ դրութիւնը պարզւեց և յայտնւեց, որ դժբախտաբար երազ չէ այդ, որ հայի գոյութեան խնդիրն իսկապէս վտանգւած է Կովկասում, այն ժամանակ միայն սկսւեց մի խելակորոյս, տենդային գործունէութիւն՝ ինքնապաշտպանութեան համար» (Արամայիս 33): Եվ այս դժվարին պահին դաշնակցական գործիչներն ամեն ջանք և եռանդ ներդրեցին, որպեսզի կազմակերպեն հայության ինքնապաշտպանությունը և փրկեն նրան ֆիզիկական ոչնչացումից:

Այսպիսով՝ ամբողջ երկրամասը շուրջ երկու տարի տակնուվրա արած հայ-թաթարական կռիվները պայմանավորված էին ոչ միայն ցարական իշխանությունների հրահրիչ քաղաքականությամբ, այլև պատմական, տնտեսական, կրոնական, մշակութային և մի շարք այլ հիմնավոր պատճառներով:

Եզրակացություններ

Ընդհանրացնելով պետք է ամրագրել, որ

- հայ-թաթարական կռիվների բռնկումը նախևառաջ հետևանք էր ցարիզմի քաղաքականության:
- Օգտվելով այստեղ ապրող ազգությունների միջև առկա պատմական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական, ազգային և այլ տարաբնույթ հակասություններից՝ Ռուսական միապետությունն Այսրկովկասում գործադրեց ազգամիջյան կռիվներ հրահրելու քաղաքականությունը հեղափոխական շարժման վերացման համար՝ ի տարբերություն կայսրության այլ հատվածների, որտեղ գործի էր դրվում ցարական ոստիկանությունը և ռազմական մեքենան:
- Համաիսլամիզմի և համաթուրքականացման գաղափարախոսությամբ առաջնորդվող կովկասյան թուրք հրոսակախմբերի միջոցով ցարական իշխանությունների հրահրմամբ և թողտվությամբ սանձազերծված ջարդերի քաղաքականությունը հայության նկատմամբ ֆիզիկական ոչնչացման փորձ էր, որը հիմնովին տապալվեց՝ շնորհիվ ազատագրական պայքարի նշանավոր գործիչների կազմակերպած հերոսական ինքնապաշտպանությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արամայիս. *Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից*. մաս 2, հրատ. Հերմես, Թիֆլիս, 1907:
2. Գևորգյան Համլետ. *Ազատագրական պայքարի Կովկասյան ճակատ*. Երևան, տպ. «Գևորգ-Հրայր» ՍՊԸ, 2010:
3. Թարխանյան Գեվորգ, «Հայ-թաթարական ընդհարումները Զանգեզուրում 1905-1906 թթ.». *Բանբեր Երևանի համալսարանի*, Ե., 2001, N 3 (105), էջ 111:
4. Լազեան Գաբրիել. *Հայաստանը եւ հայ դատը. հայեւռուս յարաբերութիւններու լոյսին տակ*. Երևան, հրատ. «Ադանա», 1991:
5. Հայատանի Ազգային Արխիվ, ֆ. 1022, g. 3, գ. 111, թ. 1:
6. «Մշակ». 11 փետրվարի, 1905, N 20:
7. «Մուրճ». Թիֆլիս, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905, N 11-12:
8. Յովհաննիսեան Միքայել, *Կովկասեան Վանդեան*. հրատ. Էլէքտրատպարան, օր. Ն. Աղանեանցի, Թիֆլիս, 1907, նաև՝ «Դրօշակ», օգոստոս, 1905, N 8:

9. Վարանդեան Միքայել. *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն*. Երևան, հրատ. «Երևանի պետական համալսարան», 1992:

10. Վարդանյան Թամարա. «Ազգամիջյան հակամարտությունը որպես էթնիկ ինքնության ձևավորման գործոն (1905-1906 թթ. Հայ-թաթարական ընդհարումների օրինակով)». *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, 2003, N 1, էջ 72-78:

11. ---. «Թաթարական ազգայնամոլության դրսևորումներն Անդրկովկասում XX դարի առաջին տասնամյակում». *Բանբեր Երևանի համալսարանի*, Երևան, 2000, N 3:

12. Տասնապետեան (խմբ). *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար*. Գ հատոր, Պէյրութ, 2007:

13. Փամբուկչան (խմբ). *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար*. Ե., Ե հատոր, Պէյրութ, 2007:

14. Ֆարհատ, «Իմ յիշատակարանը». *«Հայրենիք» ամսագիր*, Բոստոն, սեպտ. - հոկտ. , 1943, N 5:

15. «Всеподданейший отчет за восемь лет управления Кавказом Генерал-Адютанта Графа Воронцова-Дашкова». *СПб*., 1913.

16. Landau M. Jacob. *Pan-turkism From Irredentism to Cooperation*. London, 1995.

WORKS CITED

1. Aramayis. Mi k’ani glukh hay-t’rk’akan yndharumnerits’ [Several Chapters on the Armenian-Turkish conflicts]. mas 2, hrat. Hermes, T’iflis, 1907. (in Armenian)

2. Gevorgyan Hamlet. Azatagrakan payk’ari Kovkasyan chakat [The Caucasian Liberation Struggle Front]. Yerevan, tp. «Gevorg-Hrayr» SPY, 2010. (in Armenian)

3. T’arkhanyan Gevorg, «Hay-t’at’arakan yndharumnery Zangezurum 1905-1906 t’t’.» [Armenian-Tatar Clashes in Zangezur in 1905-1906.]. Banber Yerevani hamalsarani, Ye., 2001, N 3 (105), ej 111. (in Armenian)

4. Lazean Gabriyel. Hayastany yev hay daty. Hay ev rrus yaraberut’iwnneru loysin tak [Armenia and the Armenian National Committee. In the light of Armenian-Russian relations]. Yerevan, hrat. «Adana», 1991. (in Armenian)

5. Hayatani Azgayin Arkhiv [National Archive of Armenia], f. 1022, ts’. 3, g. 111, t’. 1. (in Armenian)

6. «Mshak». 11 p’etrvari, 1905, N 20.

7. «Murch». T’iflis, noyember-dektember, 1905, N 11-12.

8. Yovhannisean Mik’ayel, Kovkasean Vandean [Caucasian Vendee]. hrat. Elek’tratparan, or. N. Aghaneants’i, T’iflis, 1907, nayev, «Droshak», ogostos, 1905, N 8. (in Armenian)

9. Varandean Mik’ayel. H. Y. Dashnakts’ut’ean patmut’iwn [History of ARF]. Yerevan, hrat. «Yerevani petakan hamalsaran», 1992. (in Armenian)

10. Vardanyan T’amara. «Azgamijyan hakamartut’yuny vorpes et’nik ink’nut’yan dzevavorman gortson (1905-1906 t’t’. Hay-t’at’arakan yndharumneri orinakov)» [Interethnic Conflict as a Factor in the Formation of Ethnic Identity (on the Example of the Armenian-Tatar Clashes of 1905-1906)]. Lraber hasarakakan gitut’yunneri, Yerevan, 2003, N 1, ej 72-78. (in Armenian)

11. «T’at’arakan azgaynamolut’yan drsevorumnern Andrkovkasum XX dari arrajin tasnamyakum» [Manifestations of Tatar Nationalism in Transcaucasia in the First Decade of the XX Century]. Banber Yerevani hamalsarani, Yerevan, 2000, N 3. (in Armenian)

12. Tasnapetean (khmb). Niwt’er H. Y. Dashnakts’ut’ean patmut’ean hamar [Materials on the History of ARF]. G hator, Peyrut’, 2007. (in Armenian)

13. P’ambukch’an (khmb). Niwt’er H. Y. Dashnakts’ut’ean patmut’ean hamar [Materials on the History of ARF]. Ye., Ye hator, Peyrut’, 2007. (in Armenian)

14. Farhat, «Im yishatakarany» [My Colophon]. «Hayrenik'» amsagir, Boston, sept. - hokt. , 1943, N 5. (in Armenian)

15. «Vsepoddanejšij otčet za vosem' let upravleniâ Kavkazom General-Adûtan-ta Grafa Voroncova-Daškova» [The Most Faithful Report on Eight Years of Administration of the Caucasus by General Adjutant Count Vorontsov-Dashkov] SPb., 1913. (in Russian)

THE ROLE OF PAN-ISLAMISM AND PAN-TURKISM IN THE ARMENIAN-TATAR WARS OF 1905-1906

KARINE YEGHIAZARYAN
Yerevan State University, Faculty of History,
Department of Armenian History, Associate Professor, Ph.D. in History,
Yerevan, the Republic of Armenia

The aim of the article is to present the role of pan-Islamism and pan-Turkism as the real causes of the Armenian-Tatar wars that shook Transcaucasia in 1905-1906. In 1905–1906, even as the region had not yet recovered from the struggle against tsarism sparked by the June 12, 1903 seizure of Armenian Church property, major upheavals unfolded in Transcaucasia. The Armenian-Tatar wars lasted a year and a half and had disastrous consequences for the region, causing enormous material damage and numerous human casualties on both sides, and requiring several years for recovery and a return to normalcy. The study of those events that took place more than a century ago has not lost its relevance today. The ongoing Artsakh issue and, to put it mildly, the unfriendly Armenian-Azerbaijani relations continue to keep these historical events in the spotlight. A clear understanding of these events helps explain the roots of current Armenian-Azerbaijani relations and allows for cautious predictions about future developments.

This article is grounded in principles of comparative historical and historiographical analysis, focusing on the synthesis of facts and comprehensive examination of events. The research concludes that the massacres – initiated by Caucasian Turkish groups inspired by pan-Islamist and pan-Turkist ideologies and tolerated by tsarist authorities – were politically motivated attempts at the physical extermination of Armenians. These efforts were largely resisted and mitigated by organized self-defense efforts led by prominent figures in the Armenian liberation movement.

Keywords: *Armenian-Tatar wars, clashes, pan-Islamization, pan-Turkism, ideology, ethnic consciousness, self-defense.*

РОЛЬ ПАНИСЛАМИЗМА И ПАНТЮРКИЗМА В АРМЯНО-ТАТАРСКИХ СТОЛКНОВЕНИЯХ 1905-1906 ГГ.

КАРИНЕ ЕГИАЗАРЯН
доцент кафедры истории Армении исторического факультета
Ереванского государственного университета,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения

Цель статьи — представить роль панисламизма и пантюркизма как одной из реальных причин армяно-татарских столкновений, потрясших Закавказье в 1905–

1906 годах. К 1905–1906 годам, когда регион еще не оправился от последствий борьбы с царизмом, связанной с изъятием имущества Армянской церкви, произошедшим 12 июня 1903 года, в Закавказье происходили бурные события – армяно-татарские столкновения, которые длились полтора года и имели катастрофические последствия для Закавказья, когда обе стороны понесли огромный материальный ущерб и многочисленные человеческие потери. На восстановление региона и возвращение к нормальной жизни потребовалось несколько лет. Изучение событий, произошедших более века назад, не утратило своей актуальности и сегодня. Нерешенная арцахская проблема и, мягко говоря, напряжённые армяно-азербайджанские отношения продолжают удерживать в центре внимания исторические события недалёкого прошлого. Их четкое понимание позволяет объяснить истинные корни нынешних армяно-азербайджанских отношений и с определенной долей уверенности прогнозировать возможное развитие событий в не столь отдаленном будущем. В сегодняшних реалиях для армянского народа мало что изменилось: армянский народ и Республика Армения вновь ведут неравную борьбу со своим многовековым соседом-врагом Турцией, а также ее сателлитом- Азербайджаном на своей исторической родине за решение острого вопроса Арцаха в интересах его истинных хозяев и реализацию их права жить в историческом Арцахе. Важно глубоко понимать историко-политические события недавнего прошлого, придерживаясь взвешенного подхода и разрабатывая внепартийную историческую концепцию, чтобы сделать старинные непростые армяно-турецкие (татарские) отношения более мирными и безопасными для Армении.

В рамках данной статьи мы ставим перед собой задачи:

а) представить факты всесторонне, максимально беспристрастно, освещая те или иные значимые события на основе мемуаров, писем и сохранившихся документов;

б) раскрыть роль панисламизма и пантюркизма как важных факторов в армяно-татарских столкновениях 1905–1906 гг.

Освещение темы основано на историко-сравнительном и историко-критическом подходах, принципах историчности, совокупности фактов и всестороннего анализа событий. Основной вывод, сделанный в рамках исследования, заключается в том, что политический характер погромов, развязанных кавказско-турецкими бандами, движимыми идеологией панисламизма и пантюркизации при попустительстве царских властей, представлял собой попытку физического истребления армян, которая была полностью пресечена благодаря героической самообороне, организованной видными деятелями армянской освободительной борьбы.

Ключевые слова: *армяно-татарские столкновения, панисламизация, пантюркизм, идеология, этническое сознание, самооборона.*